



JRAK

PARISH NEWS

MESSAGE OF FAITH



"I am the Lord's servant". Mary Answered. "May it be to me as you have said". Then the angel left her." - Luke1:38

Mary has been praised by countless generations, as the young virgin girl who found favour with God. Her submission and trust was to serve and obey willingly. She believed the angels words and agreed to bear the child for God to bring about 'His' plan for salvation.

Friday 17 July

At the annual Church family gathering a special celebration was held to honour Fr Barteve's 25th year of ordination.

Over 120 servants of the Church gathered together at the Edgarian Hall. Clergy and members of the various church bodies came together and shared dinner in a warm family atmosphere.

The evening was presided by His Grace Bishop Haigazoun Najarian and hosted by the Church Council.

Whilst the evening tributes were marked for Der Barteve, the cutting of cakes was reserved for both our long serving Reverend Fathers with Fr Norayr also celebrating his 30th ordination anniversary in 2015.

It was an evening that will be remembered for the genuine display of appreciation, celebration and good cheer.



It's A Girl! WELCOME BABY GOHARIK

Congratulations to Yereckin and Ter Avetis on the safe arrival of Goharik on 6 July. May God bless baby Goharik and her proud parents and brother Sargis.

LEARN HOW TO PREPARE MAS (Holy Bread)

Are you interested to join our group of ladies to prepare Mas once a month on a Monday?

Please contact the church office on 9419 8056 for more information and express your interest.

Sunday 19 July & 26 July

Ahead of the Pan-Armenian Games, athletes from Homenetmen Ararat and Antranig Chapters attended Holy Mass to receive Communion and the blessing of the Primate before leaving for Armenia.



COMING UP

Sunday 16 August

Feast of the Assumption of the Holy Mother-of-God

Annual St Mary's Day Luncheon after Badarak at 1.00 p.m. Come and join us at the Edgarian Hall for a delicious lunch prepared by our Ladies Auxiliary team to celebrate St Mary's Day. Why not organise a table for your group of friends and enjoy a hot lunch and good cheer. This is a very popular event so book early, reservations are required. For inquiries and tickets please contact the Church Office 94198056.



In the Calendar of the Armenian Church, this feast is the fourth of five major feasts that are commemorated, and is the oldest one dedicated to St. Mary.

Friday 11 September

Celebrating the 30th Ordination Anniversary of Rev. Fr. Norayr Patanian

The Church Council will host an evening for our community representatives to toast the milestone anniversary of our long-standing parish priest, Der Norayr.


Sunday 22 November

Armenian Kermess

After Badarak join in the fun and celebrations of our rich Armenian culture, heritage and food at the church grounds.



Մբ. Աստուածածնի վերափոխման Տօն



Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին, Մ. Մարիամ Աստուածածնի հետ կապուած տօները, ի տարբերութիւն միւս Սուրբերուն, կը տօնէ Կիրակի օրերը՝ որպէս Տէրունի օրեր, որովհետեւ եկեղեցին Մարիամ Աստուածածինը կը նկատէ որպէս Եկեղեցոյ Մայրը եւ անոր կընծայէ յատուկ կարեւորութիւն: Իսկ Ս. Մարիամ Աստուածածնի Վերափոխման տօնը եկեղեցոյ կողմէ դասուած է Տաղաւար տօներու շարքին՝ յատուկ մեծարանքով նշելու համար անոր սուրբ յիշատակը:

Սուրբ Աստուածածնի նուիրուած տօներէն մեծագոյնն է Վերափոխման Տաղաւարի տօնը, որ կը տօնուի ամէն տարի Օգոստոսի 15ին ամենամօտիկ կիրակին: Այս տօնին Հայ Առաքելական Ս. Եկեղեցին կը յիշատակէ Սուրբ Աստուածածնի ննջումն ու երկինք վերափոխուիլը:

Վերափոխման տաղաւարին կը տօնենք ասանդութիւն մը, որ կու գայ առաքելներու շրջանէն՝ նոյն իսկ առաքելներու կողմէ փոխանցուած: Մեր Տիրոջ համբարձումէն 15 տարիներ ետք, երբ Սուրբ Կոյս Աստուածածինը կը գտնուէր Յովհաննէս Առաքելի որդիական խնամքին տակ, իր հոգին կ'աւանդէ ու առաքելներու կողմէ իր մարմինը կամփոփուի Գեթսեմանիի ձորակին մէջ: Սակայն Ս. Բարթողոմէոս Առաքել թաղման ժամանակ ներկայ չկրնար գտնուիլ Երուսաղէմ: Ինք երբ կը վերադառնայ, կը լսէ Տիրամօր ննջման լուրը ու իր առաքելակիցներէն կը լսէ թէ ինչ պայծառ դէմք մը ունեցած է ան ննջման պահուն: Կը փափաքի անպայման վերջին անգամ եւս տեսնել զայն: Ուստի առաքելները խմբովին կ'իջնեն Գեթսեմանիի ձորակը ու կը բանան Տիրամօր գերեզմանը: Սակայն մարմինը չեն գտներ: Այսպէս՝ կը համոզուին թէ Քրիստոս իր մայրը երկինք վերափոխած է: Ահաւասիկ այսպէս, Առաքելական շրջանէն արդէն կը սկսի Տիրամօր «Ննջման» կամ «Վերափոխման» տօնակատարութիւնը:

Տէր Յիսուս Քրիստոս խաչին վրայ իր Հոգին ասանդելէ առաջ, Ս. Մարիամ Աստուածածինը յանձնեց Յովհաննէս Առաքելի խնամքին: Իսկ Ս. Յովհաննէսը՝ որ այդ պահուն խորհրդաւոր կերպով կը ներկայացնէր Քրիստոսի Եկեղեցին յանձնուեցաւ Սուրբ Կոյսի մայրական խնամքին (Յովհաննէս 19.26-27): Տէրը այսպիսով Սուրբ Կոյսը կը նկատուէր որպէս Սուրբ Եկեղեցոյ մայրը: Ուստի Սուրբ Կոյսը առ այսօր կը շարունակէ իր մայրական խնամքը տարածել Եկեղեցոյ վրայ ու իր սուրբ աղօթքներով ու խնդրանքներով կը բարեխօսէ մեզմէ իւրաքանչիւրին եւ ընդհանրապէս բոլոր Եկեղեցոյ փրկութեան եւ բարօրութեան համար: Նաեւ ան, որպէս մայրը թագաւորներու Թագաւորին, Թագուհիի ու երկինքի արքայութեան եւ գլխաւորը սրբոց դասին: Ուստի երբ կը կարօտինք հոգեւոր օգնութեան ու սփոփանքի, ունինք Մայր մը, որ պատրաստ է խնամք տանելու մեզի եւ մեր մեղաց համար թողութիւն խնդրելու իր Միածին Որդիին առջեւ: Ի զուր չէ, որ Եկեղեցին բազում շարականներ ու բարեխօսութեան մատթանքներ յօրինած է՝ Սուրբ Կոյսին ուղղեալ:

Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածին իր օրինակով գերագոյն տիպարն է կատարեալ Քրիստոնէայի: Կարեւոր է հասկնալ Մարիամ Աստուածածնի տեղը մեր հոգեւոր կեանքին մէջ: Եթէ քննենք թէ՛ ան ինչպէս արժանացաւ այս բոլոր շնորհներուն եւ մեծարանքներուն, կը գտնենք հոգեւոր կեանքի կարեւորագոյն բանալին:

Սրբուհի Աստուածածնի օրինակը պէտք է միշտ գտնուի մեր աչքերուն առջեւ: Մեր կեանքին մէջ դժմ յանդիման կը մնանք զանազան դժուարութիւններով: Երբեմն կեանքը մեր առջեւ կը դնէ երկրնորանքներ ու որոշում տալու պարտաւորութեան ներքեւ կը մնանք: Պէտք է ընտրենք կամ հոգեւորը կամ նիւթականը: Ս. Մարիամ Աստուածածնի օրինակը մեզի ցոյց կու տայ թէ, երբ կընտրենք հոգեւորը, դժուարութիւններ կրելով հանդերձ Տիրոջ շնորհքը մեզի կ'օգնէ ու կը զօրացնէ: Թէեւ աշխարհիկ որոշ կարծեցեալ հարստութիւններէ կը զրկուինք, սակայն կը տիրանանք այնպիսի հոգեւոր արժէքներու, որոնք մեզմէ երբէք չեն բաժնուիր ու չեն սպառիր:

Կիրակի 12 Յուլիս Վարդավառ

Ուրբաթ 17 Յուլիս

Տէր Պարթէի Քահանայ Գարագաշեանի եկեղեցոյ քահանայական քսանիկնգ տարուայ ծառայութեան գնահատական երեկոյ:

Ինչպէս նաեւ գնահատութիւն ու երախտագիտութիւն Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ կամաւորներուն: Եկեղեցոյ Օյական Խորհուրդի կազմակերպութեամբ:

Կիրակի 19 և 26 Յուլիս

Համագգայիկի Նայիրի եւ ՀՄԸՄ-ի Արարատ և Անդրանիկ մասնաճիւղերու մարդիկները Սուրբ Հաղորդութիւն ստացան, նախքան իրենց Մայր Հայրենիք մեկնիլը
Համահայկական մարզական խաղերու մասնակցութեան:

Շնորհաւորական Երեցկին Յասմիկի, Տէր Աւետիս Քահանայի և Սարգիս Համբարձումյաններուն, Գոհարիկի ծննդեան ուրախ առթիւ:

Կիրակի 16 Օգոստոս

Սուրբ Աստուածածնի տարեկան ճաշկերոյթ Էտկարեան սրահէն ներս: Հեռաձայնէլ Եկեղեցոյս գրասենեակը՝ 9419 8056

Կիրակի 22 Նոյեմբեր Հայկական Քերմէս

Երկուշաբթի 17 Օգոստոս

Առաջնորդ Տէր Հայկազուն Եպիսկոպոս Նաճարեանի հովանաւորութեամբ, Փրոֆ Աստղիկ Պալայան պիտի բանախօսէ Հայերէն լեզուի դասատուներուն: Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ Էտկարեան սրահէն ներս երեկոյեան ժամը 7-ին: